Funded by the European Union and the Council of Europe

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Implemented by the Council of Europe

Գործընկերություն հանուն լավ կառավարման (ԳԼԿ II) 2019-2022թթ.

Տարածաշրջանային ծրագիր՝ փաստաբանի մասնագիտության ամրապնդում եվրոպական չափանիշներին համապատասխան

Ո՞րն է ծրագրի նպատակը

- Ամրապնդել Փաստաբանների միությունների միջև համագործակցությունը՝ նրանց գործունեությունը և անկախությունը բարելավելու, ուստիև քաղաքացիների համար ավելի լավ իրավական պաշտպանություն ապահովելու նպատակով:

Ովքե՞ր են ծրագրի շահառուները

- Լայն հասարակությունը կօգտվի իր իրավունքների ավելի արդյունավետ պաշտպանությունից:
- Ինքնակառավարման փաստաբանական միությունները և փաստաբանները:
- Արդարադատության նախարարությունները:

Ինչպե՞ս է իրականացվում ծրագիրը

- Տարածաշրջանային միջոցառումների միջոցով, որոնք նպաստում են գործընկերների կողմից լավագույն փորձի յուրացմանը և խթանում տարածաշրջանային համագործակցությունը և ընդհանուր լուծումները:
- Ազգային փաստաբանական միությունների նորահայտ կարիքների բավարարման համար մշակված մոտեցումների կիրառմամբ:
- Ծրագիրը հիմնված է արդարադատության ոլորտում համագործակցության ԳԼԿ 1-ին փուլի (2015-2018թթ.) շրջանակներում արձանագրված արդյունքների վրա:

Ի՞նչ արդյունք ենք ակնկալում

- Փաստաբանների և փաստաբանական միությունների տարածաշրջանային համագործակցության ցանցի ստեղծում՝ արդարադատության պատշաճ իրականացման նպատակով փոխադարձ համագործակցության ամրապնդման համար:
- Փաստաբանական միությունների ներքին գործառնության բարելավում:
- Փաստաբանների անկախության և արհեստավարժության ամրապնդում:
- Փաստաբանների իրավաբանական ծառայությունների մատուցման բարելավում:

http://partnership-governance2-eu.coe.int

Որքա՞ն է ծրագրի արժեքը

- Ընդհանուր բյուջեն կազմում է 575 000 եվրո։
- Ծրագիրը 80%-ով ֆինանսավորվում է ԵՄ-ի և 20%-ով՝ Եվրոպայի խորհրդի կողմից։ Ծրագիրն իրականացնում է Եվրոպայի խորհուրդը։

Որքա՞ն է ծրագրի տևողությունը

- Ծրագրի տևողությունն է 2019 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը։

Ինչպե՞ս ստանալ հավելյալ տեղեկություններ

- Արդարադատության և իրավական համագործակցության բաժին, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության հարցերով գլխավոր տնօրինություն։

Կոնտակտային տվյալներ

Ծրագրի թիմը Ստրասբուրգում՝

- Լիլիա Գրետարսդոտտիր, Համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավար, lilja.gretarsdottir@coe.int
- Լիլիթ Դանեղյան-Բոսլե, Համագործակցության ծրագրերի բաժնի ղեկավարի տեղակալ, lilit.daneghian-bossler@coe.int
- Մարիանա Կիկու, Հայաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի բաժանմունքի ղեկավար, Համագործակցության ծրագրերի բաժին, mariana.chicu@coe.int
- Նատալիա Խոդակևիչ, Ծրագրի համակարգող, natalia.khodakevich@coe.int

Ծրագրի թիմը Երևանում՝

- Կարեն Կարապետյան, Ծրագրի պատասխանատու, karen.karapetyan@coe.int

Սա տարածաշրջանային ծրագիր է, որում ընդգրկված են Արևելյան գործընկերության երկրները (Հայաստան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա և Բելառուս[1]) և որն իրականացվում է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում (2-րդ փուլ կամ ԳԼԿ II)։

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը համաձայնել են, որ թիրախային համագործակցության միջոցառումները ԵՄ Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի հետ կիրականացվեն «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում։ Ծրագրի 1-ին փուլը (ԳԼԿ I)

[1] *Հաշվի առնելով Բելառուսում ստեղծված քաղաքական իրավիճակը՝ համաձայն Եվրոպական միության կողմից ընդունված սահմանափակումների տվյալ երկրի հետ համագործակցությունը կասեցված է, և ԳԼԿ II-ի իրականացման մնացած ժամանակահատվածի համար դեռևս նոր գործողություններ չեն նախատեսվում՝*

մեկնարկել է 2015 թվականին և ավարտվել 2018 թվականին։ Ծրագրի երկրորդ փուլը (ԳԼԿ II) մեկնարկել է 2019 թվականին և կտևի մինչև 2022 թվականի օգոստոս ամիսը։

Համագործակցության այս միջոցառումները կհզորացնեն Արևելյան գործընկերության երկրների կարողությունները, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ են, բացառությամբ Բելառուսի՝ մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին ավելի սերտ հաղորդակից դարձնելուն միտված ներպետական բարեփոխումներ իրականացնելու նպատակով։